ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐ Ի ԿԻՊՐՈՍ

(ԺԳ — ԺԴ ԴԱՐ)

ԺԳ. Դարուն վերջերը եւ ԺԴ. Դարու առաջին կիսուն Կիպրոսի մէջ գրչական աշխատանքներ կատարած են մօտ տասնեակ մը անձեր, Մագուսայի Կանչուոր Ս. Աստուածածնի Վանքին, Նիկոսիոյ Ս. Վարդան եւ Ս. Սարգիս, եւ Ծիպս գիւղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցիներուն հովանիին տակ: Կը ներկայացնենք զանոնք ժամանակագրական կարգով:

Ա. Պետրէ Երէց, 1280*ին, օրինակած է* Աւետարան *մը, Հռոմխաթունի պատուէրով, «ի դուռն Ս. Աստուածածնին»— Ձեռագիր Նոր Ջուղայի, թիւ* 33:

Բ. Խաչատուր Քահանայ, 1287*ին, օրինակած է* Աւետարան *մը, «ի կղզին որ կոչի Կիպրոս, ընդ հովանեաւ Սուրբ Վարդանայ, եւ Սուրբ Զօրավարին Սարգսի»— Հանդ. Ամս.* 1937, *էջ* 380: *Ձեռ. Երեւանի, թ.* 6845:

Գ. Լեւոն Քահանայ, 1306*ին, օրինակած է* Սաղմոսարան *մը, «ի Հռչակաւոր կղզին Կիպրոս, ի գեաւղն որ կոչի Ծիպս, ընդ հովանեաւ Սրբոց Հրեշտակապետացն Միքայէլի եւ Գաբրիէլի»— Ցուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Դ. Հատոր,* 1969, *էջ* 48:

Դ. Յովհաննէս Գրիչ, *որդի Մինայի,* 1308*ին, օրինակած է մէկ հին* Կտակարան *(մասնակի), «ի Կիպրոս, ի Մագուսա քաղաքն»— Ցուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Զ. Հատոր, թ.* 1926:

Ե. Հայրապետ Գրիչ, *Կիլիկիոյ Փոռ Անապատէն,* 1309*ին, աքսորուած է Կիպրոս, «վասն ոչ հնազանդելոյ աւանդիցն Քաղկեդոնի»— Լ. Ս. Խաչիկեան, Յիշ. ԺԴ. Դարի,* 1950, *էջ* 62–63:

Զ. Ստեփանոս Գրիչ Գոյներերիցանց, 1312—1314, *օրինակած է,*

1. Գործք Առաքելոց, 1312*ին, «ի Մագուսայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին»— Յիշ. ԺԴ. Դարի, էջ* 69:

2. Ծիսական Մաշտոց, 1314*ին, Կիպրոսի Սենեշալէս Տիկին Ալիծի համար, «ի Կիպրոս Կղզի, ի քաղաքն Մագուսա, ի Վանքն Հայոց, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, և Սրբոյն Յովհաննու Աւետարանչին»— Ցուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Բ. Հատոր,* 1967, *էջ* 61:

Է. Սմբատ Գրիչ, 1316*ին, օրինակած է,*

1. Սաղմոս. *Ստեփանոս քահանայի համար, Լեւքոսիա հայակաց քաղաքին մէջ, «ընդ հովանեաւ Սրբոյ կուսին Վարդանայ»— Յիշ. ԺԴ. Դարի, թիւ* 159:

digitised by A.R.A.R.@

2. Շարական, նոյն ձայնին մէջ.— Հայկ. Եկեղեցի, 1951, էջ 245: Ձեռ. Յ. Քիւրտեան:

Ը. Յովհաննէս Վարդապետ, 1317ին, խմբագրած է մէկ Մեկնութիւն Ժամակարգութեան և Պատարագի, «ի Կիպրոս կղզի, ի դուռն Աստուծոյ Մայր տաճարին Աստուածածնին, որ է Վանք, և կոչի Կանչուոր, ի քաղաքին Մագուսա»: Աչքը ակարացած ըլլալուն համար գործածեր է «աչքապակի», և ատով յաջողած է աւարտել իր գիրքը.— Ցուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Դ. Հատոր, 1969, էջ 224—227:

Թ. Թորոս Գրիչ, որ երբ պանդուխտ կը գտնուէր Կիպրոս, 1318ին օրինակած է Աւետարան մը, «ի դուռն ամենահրաշին Սրբոյն Սարգսի».— Յիշատ. ԺԴ. Դարի, Թիւ 186:

Ժ. Պօղոս Գրիչ, 1341ին, օրինակած է Դաշանց Թուղթ մը, «ի Կիպրոս կղզւոջ, ի քաղաքին Լեւքոսիա, ընդ հովանեաւ Սուրբ Սարգսին, ի տէր Անդրանիկոսի գրած աւրինակէ».— Ցուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Դ. Հատոր, 1969, էջ 604:

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@